ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/233 «03» 07 2026 թ.

«Կարեն Պողոսյան» ԱՁ
(ՀՎՀՀ 57347822)
ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի,
Ղորղանյան 7 նրբ., Տ 16
էլ. հասցե. laragharibyan9@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «Կարեն Պողոսյան» ԱՁ-ի միջև 2026թվականին մարտի 10-ին կնքված «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7-4» ծածկագրով պայմանագրի շրջանակում «Կարեն Պողոսյան» ԱՁ-ն պետք է մատակարարեր՝ պոլո շապիկներ-150 հատ, տաբատներ-350 հատ և ուսադիրներ-1400 զույգ, սակայն «Կարեն Պողոսյան» ԱՁ-ի կողմից մինչ օրս չեն մատակարարվել նշված ապրանքատեսակները և չեն կատարվել պայմանագրային պարտավորվածությունները՝ խախտելով պայմանագրի 2.1.1 կետը, որով սահմանում է, որ «Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում վաճառողի կողմից չմատակարարվելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել»:

Համաձայն ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգի 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից կիրառելով տուժանքի և տուգանքի մասին պայմանագրի դրույթները՝ համաձայն պայմանագրի 6-րդ կետի պահանջների՝

յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձել տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը կազմում է **20866 դրամ** և տուգանք՝ պայմանագրի արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ **18400** դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և կատարողը խախտել է ապրանքների մատակարարման ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման կարգի 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «Կարեն Պողոսյան» ԱՁ-ի միջև կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7-4» ծածկագրով Պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«Կարեն Պողոսյան» ԱՁ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 755 597 (յոթ հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ և պայմանագրի ապահովման գումար 503 732 (հինգ հարյուր երեք հազար յոթ հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության N900008000664 հաշվեհամարին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «Կարեն Պողոսյան» ԱՁ-ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Տ. ԵՆՈՔՅԱՆ

Կատարող՝ Է. Մնացականյան
Հեռ. 010-59-64-86